399

1. Փառքն ու պատիվը Աստծուն վայել են.
Ամեն օրհնության ակն ու աղբյուրն է:
Բոլոր բարիքներն Իր ձեռքեն կառնենք
Եվ Աստծուն մենք միշտ կփառավորենք:
Անբավ զորություն և արքայություն,
Մեծություն և փառք հավիտենական,
Ամենաօրհնյալ փառքի Թագավոր,
Փառք ու պաշտամունք, գովաբանություն:

Փառք (3), Հայր Աստծուն փառք,
Փառք (3), Աստծո Որդուն փառք,
Փառք (3) և Սուրբ Հոգուն փառք,
Փառք Երրորդությանն, հավիտյանս փառք:

2. Աստծո անունով դրոշակ վերցնենք,
Կյանքի լույսի մեջ համարձակ քայլենք,
Աստծու առջև ցնծությամբ երգենք
Եվ Աստծուն միշտ մենք կփառավորենք:
Օրհնեցե՛ք Աստծուն ամեն ժամանակ,
Օրհնե՛ք Սուրբ Հոգու հզոր զորությամբ,
Որդու անունից խնդրենք շարունակ
Վերին հանգստի արքայությունը: